Հավելված 13 Բրոքերային դիլերային կանոնների

Հաստատված է«Ինվիա Ինվեսթմենթս» ՓԲԸ

04/08/2024թ. Բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի կողմից

Ուժի մեջ է 14/08/2024թ-ից

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐՈՎ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ ԿՆՔԵԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐ

«Ինվիա Ինվեսթմենթս» փակ բաժնետիրական ընկերության Էլեկտրոնային առևտրային համակարգի միջոցով ֆինանսական գործիքներով գործարքներ կնքելու կանոնները (այսուհետ՝ «Կանոններ») «Ինվիա Ինվեսթմենթս» ՓԲԸ-ի (այսուհետ՝ «Ընկերություն») ներքին իրավական ակտն է, որը սահմանում է Հաճախորդի կողմից Ընկերության էլեկտրոնային առևտրային համակարգի միջոցով ֆինանսական գործիքներով գործարքներ կատարելու կարգը: Կանոնները մշակվել են Հայաստանի Հանրապետության արժեթղթերի շուկան կարգավորող օրենսդրությանը, Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտերին, Ընկերության կանոնադրությանը և ներքին իրավական ակտերին համապատասխան:

Կանոնները հանդիսանում են Ընկերության Բրոքերային (դիլերային) գործունեության կանոնների (Բրոքերային Կանոններ) անբաժանելի մասը:

Սույն Կանոնները կիրառելի են այն Հաճախորդների նկատմամբ, որոնք միացել են Կանոններին և հասանելիություն են ստացել **Էլեկտրոնային առևտրային համակարգին:**

1. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1 Ստորև նշված հասկացությունները սույն կանոներում կիրառվում են ստորև նշված իմաստներով.

1. **«Ֆինանսական գործիք»՝** ՀՀ ֆինանսական շուկայի և/կամ օտարերկրյա ֆինանսական շուկաների առևտրային հարթակներում ազատ շրջանառվող ցանկացած ֆինանսական գործիք, այդ թվում՝ արժեթղթեր (պարտատոմսեր, բաժնետոմսեր, փայեր, դեպոզիտար ստացականներ և այլն), դրամական շուկայի գործիքներ (մուրհակներ, չեկեր), ածանցյալներ, արժույթ, թանկարժեք մետաղներ և այլն:
2. **«ԱՀ (Առևտրային հարթակ)»՝** ցանկացած կարգավորվող շուկա, ինչպես նաև ֆինանսական գործիքների առևտրի կազմակերպման համար նախատեսված կազմակերպություն, համակարգ կամ այլ միջոց, որը որոշակի կանոնների համաձայն, ապահովում է ֆինանսական գործիքների առքուվաճառք և դրա արդյունքում վերջնահաշվարկ իրականացնելու հնարավորություն և միջոցներ:

3. **«Համակարգ»՝** Գործակալների և/կամ Բրոքերի գործառնական կառավարման ներքո գտնվող գործարքների կնքման հնարավորություն ընձեռող էլեկտրոնային (ցանցային, ինտերնետ) գործիք հանդիսացող ծրագրային փաթեթ (ապահովում)՝ համապատասխան ինտերֆեյսով, որը Հաճախորդին ծառայությունների մատուցման հասանելիության ապահովման տեխնիկական միջոց է և որի միջոցով Հաճախորդներին հնարավորություն է ընձեռվում ինքնուրույն գործողություններով կատարման փոխանցել գործարքների կնքման հանձնարարականներ:
4. **«Ծածկույթ»**՝ Համակարգի միջոցով Ոչ բավարար ծածկույթով գործարքների հնարավորության իրականացման համար Հաճախորդին տրամադրված անհրաժեշտ դրամական միջոցներ և/կամ Ֆինանսական գործիքներ:
5. **«Նախապայմաններ»՝** Ոչ բավարար ծածկույթով գործարքների կնքման կարգն ու պայմանները, Նախնական մարժայի մեծությունը, Սահմանային մարժայի մեծությունը, տոկոսադրույքը և դրա հաշվարկման և վճարման կարգը, Ոչ բավարար ծածկույթով վաճառքի գործարքների առարկա Ֆինանսական գործիքների սահմանափակ շրջանակը:
6. **«Հաճախորդի պարտավորություն»**՝ Համակարգի միջոցով Ծառայությունների մատուցման արդյունքում առաջացած՝ Բրոքերի նկատմամբ Հաճախորդի պարտավորությունը՝ Կանոնների և Պայմանագրի համաձայն:
7. **«Հաճախորդի դրամական պարտավորություն»**՝ Հաճախորդի պարտավորությունը, որոնք ծագել են Ոչ բավարար ծածկույթով առքի գործարքի արդյունքում:
8. **«Հաճախորդի պարտավորություն Ֆինանսական գործիքներով»**՝ Հաճախորդի պարտավորությունը, որոնք ծագել են Ոչ բավարար ծածկույթով վաճառքի գործարքի արդյունքում:
9. **«Նախնական (անհրաժեշտ) մարժայի մեծություն»**՝ Հաճախորդի հաշվում Ոչ բավարար ծածկույթով գործարքի կնքման համար անհրաժեշտ գումար, որի առկայության դեպքում Համակարգը հնարավոր է դարձնում այդ գումարի կամ այդ գումարին Շուկայական գնով համապատասխանող քանակի արժեթղթերի և համապատասխանաբար Գործարքի արդյունքում փոխանցման ենթակա գումարի կամ գործարքով փոխանցման ենթակա արժեթղթերի ընդհանուր քանակի տարբերության ապահովումը և Գործարքի կնքումը:
10. **«Սահմանային (նվազագույն) մարժայի մեծություն»**՝ Հաճախորդի հաշվում Ոչ բավարար ծածկույթով գործարքի կնքումից հետո պահպանման ենթակա նվազագույն գումար, որի առկայությունը չապահովելու դեպքում Համակարգը ավտոմատացված կերպով (առանց Հաճախորդին ծանուցելու) իրականացնում է Ոչ բավարար ծածկույթով գործարքի Հակադարձ գործարք Շուկայական գնով, որի արդյունքում ստացված Միջոցները ուղղվում են Բրոքերի նկատմամբ Հաճախորդի դրամական և/կամ Ֆինանսական գործիքներով պարտավորությունները մարելուն:
11. **«Շուկայական գին»**՝ տվյալ գործարքի կնքման ԱՀ-ում այդ գործարքի առարկա Ֆինանսական գործիքի՝ տվյալ պահին գրանցված վերջին առքուվաճառքի գինը:
12. **«Դիրքի փակում»**՝ Հաճախորդի կնքած գործարքների կնքման արդյունքում ստացված՝ Հաճախորդի Ֆինանսական գործիքի իրացում կամ վաճառված Ֆինանսական գործիքի ձեռքբերում Շուկայական գնով՝ Հակադարձ գործարքների կնքման միջոցով:
13. **«Հակադարձ գործարք»**՝ Ֆինանսական գործիքի առքի դեպքում՝ ձեռք բերված Ֆինանսական գործիքի նույնական (միևնույն թողարկման, դասի և տեսակի) Ֆինանսական գործիքի վաճառք/օտարում, Ֆինանսական գործիքի վաճառքի դեպքում՝ օտարված Ֆինանսական գործիքի նույնական (միևնույն թողարկման, դասի և տեսակի) ձեռքբերում/գնում:

14. **«Օրական առևտուր»**՝ Ֆինանսական գործիքներով գործարքի և դրան Հակադարձ գործարքի իրականացում Հաճախորդի կողմից տվյալ ԱՀ-ում միևնույն առևտրային նստաշրջանի ընթացքում:
15. **«Կայք»**՝ https://inviabroker.com/ դոմեյնի միջոցով հասանելի Բրոքերի ինտերնետային էջը:
16. **«Պայմանագիր»**՝ Ընկերության Բրոքերային (դիլերային) գործունեության կանոններով սահմանված կարգով Բրոքերի և Հաճախորդի միջև կնքված՝ Բրոքերային ծառայությունների մատուցման և բրոքերային հաշիվների սպասարկման պայմանագիրը, այդ թվում՝ դրա անբաժանելի մասը կազմող՝ Ընկերության Բրոքերային (դիլերային) գործունեության կանոններ
17. **«Պահառության պայմանագիր»**՝ Բրոքերի և Հաճախորդի միջև կնքված՝ Պահառության ծառայությունների մատուցման պայմանագիր:

1.2 Կանոններում մեծատառով օգտագործվող, սակայն Կանոնների 1.1. կետում չսահմանված տերմինները/հասկացությունները կիրառվում են Բրոքերային կանոններում սահմանված իմաստով:

2. ԿԱՆՈՆՆԵՐԻ ԱՌԱՐԿԱՆ

2.1. Համակարգի միջոցով, մասնավորապես՝ Հաճախորդին տրամադրելով հասանելիություն Համակարգին՝ Բրոքերը հաճախորդին հնարավորություն է տալիս արտասահմանյան ԱՀ-(ներ)ում արժեթղթերի և արտարժույթի առքուվաճառքի, ինչպես նաև ածանցյալ գործիքներով գործարքներ կնքել՝ Կանոններին, Պայմանագրին և Պահառության պայմանագրին համաձայն՝ դրանցում սահմանված պայմաններով:

2.2. Բրոքերը Հաճախորդին տրամադրում է.

- Համակարգի միջոցով ԱՀ-ներում գործառնությունների կատարման հնարավորություն.
- ԱՀ-ներում Ոչ բավարար ծածկույթով գործարքների կատարման հնարավորություն (սույն ենթակետը կարող է ընտրվել միայն նախորդ ենթակետն ընտրված լինելու դեպքում):

2.3. Բրոքերը Համակարգի միջոցով Հաճախորդին ընձեռում է տեղեկատվություն ստանալու հնարավորություն՝ ԱՀ-ներում գնանշումների, ինչպես նաև Ֆինանսական գործիքի գնագոյացման վրա ազդող գործոնների վերաբերյալ:

2.4. Հաճախորդը Կանոններով սահմանված կարգով վճարում է Կանոնների 2.1 - 2.3 կետերում նշված ծառայությունների համար համաձայն Սակագների մասին կանոնների:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԿԱՐԳ

3.1. Կանոնների 2.1.-2.3. կետերում նշված ծառայությունները Բրոքերը Հաճախորդին մատուցում է Համակարգին Հաճախորդի հասանելիությունը ապահովելու միջոցով: Համակարգը Հաճախորդին հնարավորություն է տալիս ինքնուրույնաբար ձևակերպել և Համակարգի միջոցով համապատասխան ԱՀ-ներում տալ Ֆինանսական գործիքի առուվաճառքի հանձնարարականներ, ընդ որում՝ Բրոքերը Համակարգին Հաճախորդի հասանելիությունն ապահովելու փաստի ուժով պատասխանատվություն է կրում Հաճախորդի հանձնարարականները փոխանցելու, սակայն պատասխանատվություն չի կրում դրանց կատարման համար, քանի որ չի հանդիսանում դրանք կատարող ներդրումային ծառայություն մատուցող անձ:

3.2. Համակարգը հնարավորություն է ընձեռում Հաճախորդին Ֆինանսական գործիքի առուվաճառքի հանձնարարականներ ներկայացնել՝ որոշակի երկրների և/կամ

տարածաշրջանների որոշակի ԱՀ-ներում գործարք կնքելու համար: Երկրները/տարածաշրջանները և ԱՀ-ները թվարկված են բրոքերային ծառայությունների մատուցման սակագներում:

3.3. Կանոնների 2.1.-2.3 կետերում նշված ծառայությունները մատուցելու նպատակով Բրոքերը Հաճախորդին փակ ծրարով կամ էլեկտրոնային փոստով՝ Պայմանագրում նշված Հաճախորդի էլեկտրոնային հասցեին ուղարկելով, տրամադրում է համապատասխան ծածկագիր՝ Համակարգ մուտք գործելու և այն շահագործելու համար: Ընդ որում թե՛ փակ ծրարով հանձնումը, թե՛ էլեկտրոնային փոստով ծածկագրի առաքումը համարվում են ծածկագրի պատշաճ հանձնում Հաճախորդին, և Բրոքերը պատասխանատվություն չի կրում ծածկագիրը երրորդ անձանց հայտնի դառնալու հետևանքով Հաճախորդին պատճառված վնասի համար, եթե չի ապացուցվում, որ ծածկագրի հայտնի դառնալը երրորդ անձանց Բրոքերի դիտավորության անմիջական արդյունք է: Համակարգը Հաճախորդի կողմից օգտագործվում է ամբողջությամբ և բացառապես Հաճախորդի ռիսկով ու պատասխանատվությամբ:

3.4. Կանոնների առարկա հանդիսացող ծառայությունների մատուցման՝ Կանոններով չսահմանված պայմանները և չկարգավորված հարաբերությունները, ինչպես նաև Հաճախորդի Միջոցների հաշվառման պայմանները, բացառությամբ Կանոնների 3.6 կետով նախատեսված հաշվառման պայմանների, սահմանվում և կարգավորվում են Պայմանագրով և Պահառության պայմանագրով:

3.5. Կանոնների հիման վրա կնքվող Գործարքներով պարտավորությունների կատարման համար նախատեսված, ինչպես նաև այդ Գործարքների արդյունքում ստացվող դրամական միջոցների հաշվառման նպատակով օգտագործվում է Հաճախորդի համար բացված համապատասխան արժույթով բրոքերային հաշիվը/ենթահաշիվը, եթե Գործարքի արդյունքում Հաճախորդի նկատմամբ դրամական պարտավորությունը կատարվում է այնպիսի արժույթով, որով հաշիվները սպասարկվում են Բրոքերի կողմից: Հաճախորդը սույնով տալիս է Բրոքերին իր հանձնարարականը՝ սույն կետում նշված հաշիվները բացելու համար: Սույն կետում նշված Բրոքերային հաշիվների/ենթահաշիվների իրավական կարգավիճակը կարգավորվում է Պայմանագրով, և Պայմանագրի՝ Բրոքերային հաշիվներին/ենթահաշիվներին վերաբերող դրույթները տարածվում են սույն կետում նշված հաշիվների վրա:

3.6. Եթե համապատասխան արժույթով հաշիվներ Բրոքերի կողմից չեն սպասարկվում, ապա Գործարքի արդյունքում ստացված Միջոցների հաշվառման նպատակով իրականացվում են արժութային համարժեքների հաշվարկները՝ հիմք ընդունելով ԱՄՆ դոլարի և համապատասխան Գործարքի արժույթի այն փոխարժեքները, որոնք կիրառվում են տվյալ Գործարքի կնքմանը մասնակցող Գործակալների կողմից:

3.7. Հաճախորդը սույնով համաձայնվում է, որ այն ԱՀ-ներում որտեղ Հաճախորդը սույն պայմանագրի համաձայն՝ կարող է Համակարգի միջոցով Հանձնարարականներ ի կատարում ուղարկելու միջոցով Գործարքներ կնքել, Հաճախորդը չի կարող Հանձնարարականները ի կատարում փոխանցման առաքել Բրոքերի կողմից բրոքերային ծառայությունների մատուցման այլ միջոցներով և որ Համակարգը այդ ԱՀ-ներում Գործարք կնքելու նպատակով Հանձնարարականները ի կատարում փոխանցելու ուղարկման նպատակներով հանդիսանում է Հաճախորդի և Բրոքերի միջև կապի միակ հուսալի միջոցը:

4. ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԿՆՔՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԿՈՂՄԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՀԱՎԱՍՏԻԱՑՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

4.1. Համակարգը հնարավորություն է տալիս Հաճախորդին կնքել Ոչ բավարար ծածկույթով գործարքներ Նախապայմաններն ապահովելու և դրանց համապատասխանելու դեպքում:

4.2. Հաճախորդը սույնով հայտարարում է, որ լիարժեքորեն հասկանում է Ոչ բավարար ծածկույթով գործարքների կնքման Նախապայմանները, ինչպես նաև գիտակցում է Ոչ բավարար ծածկույթով գործարքների կնքման առանձնահատկությունները, Ֆինանսական գործիքի սովորական առքուվաճառքի (առանց Ոչ բավարար ծածկույթի) համեմատ առավել բարձր ռիսկի առկայության հանգամանքը, մասնավորապես վնասի/կորստի դեպքում դրա մեծացումը՝ Հաճախորդի պարտավորությունների գոյացման փաստը հաշվի առնելով:

4.3. Հաճախորդը սույնով հավաստում է, որ լիովին և ամբողջությամբ հասկանում է Համակարգը, դրա շահագործման կանոնները, դրա բոլոր գործիքները, դրանով ներկայացվող տեղեկատվությունից օգտվելու և այն հիմք ընդունելով գործարքների կնքման ռիսկը, դրա միջոցով Ֆինանսական գործիքներով առքուվաճառք իրականացնելու առանձնահատկությունները, Համակարգի միջոցով մուտքագրվող Հանձնարարականների տեսակները, դրանց առանձնահատկությունները և դրանք Համակարգ մուտքագրելու տեխնիկան ու հնարավոր հետևանքները:

4.4. Հաճախորդը սույնով հայտարարում և հավաստիացնում է, որ ընդունում և գիտակցում է, որ Համակարգի հնարավորություններն ու գործիքները չօգտագործելու կամ սխալ օգտագործելու, ինչպես նաև Համակարգում առկա տվյալները հիմք ընդունելով ներդրումային որոշումներ կայացնելու ռիսկը կրում է միայն ինքը, ուստի Բրոքերը Հաճախորդի կողմից Համակարգի շահագործման հետ կապված որևէ պատասխանատվություն և վնասի հատուցման որևէ պարտավորություն չի կրում:

4.5. Բրոքերը հայտարարում է, որ Համակարգին Հաճախորդի հասանելիությունը ապահովելով, որևէ պարտավորություն և դրանից բխող պատասխանատվություն չի ստանձնում Հաճախորդին Համակարգի շահագործման կանոնները, կարգը և առանձնահատկությունները բացատրելու համար և լիովին վստահում է Կանոնների 4.1.-ից 4.4-րդ կետերում նշված՝ Հաճախորդի հավաստիացումներին և հայտարարություններին:

4.6. Հաճախորդը տեղյակ է, որ Ծածկույթով գործարքների դեպքում առկա են շուկայական և գործառնական ռիսկեր, որոնց տեղի ունենալու դեպքում հնարավոր է, որ Հաճախորդի կորուստները գերազանցեն ներդրված գումարը, որի դեպքում Հաճախորդը կրում է ամբողջական պատասխանատվություն թե կորստի, և թե մյուս կողմին պատճառված վնասների համար:

4.7. Հաճախորդը գիտակցում է, որ Ֆինանսական գործիքներով առևտուրն իրականացվում է տեխնիկական միջոցներով, իսկ հասանելիությունն ապահովում է համացանցի միջոցով և դրանց խափանումը կարող է հանգեցնել որոշակի վնասների, որոնց պատասխանատվությունը կրում է Հաճախորդը:

4.8. Հաճախորդը գիտակցում է, որ շուկայում գործող իրավիճակով պայմանավորված, առքի և վաճառքի պատվերի/հայտի դեպքում հնարավոր է ԱՀ-ը չկարողանա բավարարել պատվերի/հայտերի ամբողջական կատարումը:

5. ՀԱՄԱԿԱՐԳԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

5.1 Համակարգը շահագործվում է բացառապես Հաճախորդի հայեցողությամբ և պատասխանատվությամբ:

5.2 Հաճախորդին Համակարգ մուտք գործելու համար տրամադրված ծածկագրով ցանկացած մուտք Համակարգ և Համակարգով իրականացված ցանկացած գործողություն, անկախ մուտքը փաստացի իրականացրած անձի ինքնությունից, համարվում է Հաճախորդի մուտքը Համակարգ և Հաճախորդի կողմից իրականացրած գործողություն/կնքված գործարք, եթե մինչև այդպիսի մուտքը Հաճախորդը նախապես գրավոր չի տեղեկացրել Բրոքերին Պայմանագրում նշված կապի միջոցներով և գործառնական օրվա ընթացքում, որ իրեն տրամադրված ծածկագիրը հայտնի է դարձել կամ կարող էր հայտնի դարձած լինել այլ անձանց՝ առանց Հաճախորդի թույլատվության, և չի պահանջել իրեն տրամադրել նոր ծածկագիր:

5.3 Նոր ծածկագիր պահանջելու դեպքում այն Կանոնների 3.3. կետով սահմանված կարգով փոխանցվում է Հաճախորդին ստացման մասին ստորագրությամբ կամ էլեկտրոնային հաղորդագրությամբ պահանջը ներկայացնելուց հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում: Ընդ որում, եթե պահանջը ներկայացնելուց հետո 4 աշխատանքային օրվա ընթացքում Բրոքերը չի ստանում նոր ծածկագիր չստանալու մասին գրավոր բողոք, նոր ծածկագիրը համարվում է տրամադրված:

5.4 Համակարգին Հաճախորդի հասանելիությունը տրամադրվում է՝ հիմնվելով վերջինիս կողմից տրված հավաստիացման վրա առ այն, որ Հաճախորդը լիարժեքորեն տիրապետում է Համակարգին, գիտակցում և հասկանում է դրանով կատարվող բոլոր գործողությունների իրավական և ֆինանսական/տնտեսական հետևանքները:

5.5 Հաճախորդը հավաստում է, որ հասկանում է Համակարգի բոլոր ստեղների և ընտրված գործառնությունների վրա սեղմում իրականացնելու բոլոր իրավական և ֆինանսական հետևանքները և գիտակցում է դրանց նշանակությունը:

5.6 Հաճախորդը հավաստում է և գիտակցում է, որ Համակարգին հասանելիություն ապահովող և Համակարգով գործողություններ կատարելու համար օգտագործվող սարքավորումների և միջոցների (հեռախոս, պլանշետ, համակարգիչ, ստեղնաշար, մկնիկ, անջատման-միացման ստեղներ և այլն) շահագործմամբ, ինչպես նաև այդ սարքավորումների և դրանց պարագաների էլեկտրական սնուցման միջոցներով կամ դրանց միջամտությամբ իրականացված ցանկացած գործողություն (ստեղնաշարի, մկնիկի, սարքավորման ստեղնի ցանկացած սեղմում/քլիք և այլն)՝ անկախ այդ գործողության գիտակցված թե չգիտակցված, նախատեսված թե պատահական բնույթից, կարող է հանգեցնել Ֆինանսական գործիքներով գործարքների կատարման, դրանց պայմանների սահմանման և/կամ փոփոխման, Ծածկույթին, շուկայական տվյալներին և տեղեկատվական ծառայություններին Համակարգի միջոցով Հաճախորդին հասանելիության ակտիվացման, ապաակտիվացման, դրանց ժամանակային ռեժիմի փոփոխման և այլ իրավական ու դրանցից բխող ֆինանսատնտեսական հետևանքների, Կանոնների և Ֆինանսական գործիքներով գործարքների պայմաններին համապատասխան, մասնավորապես՝ ֆինանսական կորուստների, չնախատեսված ծախսերի, Հաճախորդի Ֆինանսական գործիքներով պարտավորությունների առաջացմանը: Սույն կետի համաձայն՝ Համակարգով որևէ գործողություն իրականացնելու՝ սույն կետում նշված և ցանկացած այլ հետևանքների համար պատասխանատվություն է կրում բացառապես Հաճախորդը:

5.7 Բրոքերն իրավունք ունի ժամանակավորապես կամ անորոշ ժամկետով արգելափակել Հաճախորդի հասանելիությունը Համակարգին՝ այդ մասին հնարավորինս սեղմ ժամկետներում էլեկտրոնային նամակով ծանուցելով Հաճախորդին, եթե՝

1. հիմնավոր կասկածներ ունի, որ Համակարգը շահագործվում է այն շահագործելու իրավասություն չունեցող անձի կողմից,

2. հիմնավոր կասկածներ ունի, որ Համակարգով իրականացվում են հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման միտված գործողություններ,
3. անհրաժեշտություն է առաջացել իրականացնել Համակարգի տեխնիկական սպասարկումը՝ այն բարելավելու կամ անսարքությունները վերացնելու նպատակով:

5.8 Հաճախորդը գիտակցում, ընդունում և համաձայնվում է, որ հնարավոր են Բրոքերից անկախ պատճառներով Համակարգի անկանխատեսելի ընդհատումներ, մասնավորապես՝ Համակարգի ցանցային կապը ապահովող կապուղիների, սերվերների, կապող հանգույցների անսարքությունների, ինչպես նաև Համակարգին կապը մատակարարող անձանց կողմից այդպիսի անսարքությունները վերացնելուն ուղղված միջամտություն իրականացնելու հետևանքով, և որ նման ընդհատումների համար Բրոքերը պատասխանատվություն չի կրում:

5.9 Բրոքերի կողմից Կայքում Համակարգի օգտագործման/շահագործման ձեռնարկները, ուղեցույցերը, ուսուցողական կամ նմանատիպ այլ նյութերն ունեն բացառապես տեղեկատվական բնույթ և որևէ պարտավորությամբ չեն ծանրաբեռնում Բրոքերին, հետևաբար Հաճախորդը չի կարող որևէ պահանջ ներկայացնել Բրոքերին սույն կետում նշված նյութերի հիման վրա գործողություններ ձեռնարկելու կամ չձեռնարկելու հետևանքների կապակցությամբ:

5.10 Հաճախորդը համաձայնվում է, որ Համակարգի միջոցով Հաճախորդին հասանելի բոլոր տեղեկությունները, շուկայական տվյալները (թե՛ իրական ժամանակում, թե՛ ուշացումով ընտրանքների դեպքում), այն է՝ Ֆինանսական գործիքների առուվաճառքի գնանշումները, տնտեսական, քաղաքական և այլ ընդհանուր բնույթ կրող և մասնավոր անձանց վերաբերող բոլոր նորությունները կրում են բացառապես տեղեկատվական բնույթ, կարող են ունենալ ժամանակային, բովանդակային և/կամ այլ շեղումներ իրական ժամանակում կամ որևէ այլ պահի դրությամբ համապատասխան ԱՀ-ներում իրական տվյալներից և գնանշումներից, կարող են պարունակել տեխնիկական և թվաբանական անհամապատասխանություններ/անճշտություններ: Հաճախորդը դրանք օգտագործում է բացառապես իր ռիսկով: Բրոքերը պատասխանատվություն չի կրում դրանց հիման վրա Հաճախորդի ընդունած ներդրումային որոշումների և գործողությունների/անգործության բացասական հետևանքների և կորուստների համար:

6. ՆԱԽԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

6.1 Բրոքերը Համակարգի միջոցով կարող է ապահովել Ոչ բավարար ծածկույթով առքի և վաճառքի գործարքների կնքման հնարավորությունը Հաճախորդի համար, եթե Հաճախորդն ապահովում է Նախնական մարժայի մեծության առկայությունը Հաճախորդի հաշվում:

6.2 Նախնական մարժայի մեծությունը արտահայտվում է որպես Ոչ բավարար ծածկույթով գործարքի գին/մեծություն, որը հասանելի և տեսանելի է Համակարգում յուրաքանչյուր Ոչ բավարար ծածկույթով գործարք կնքելիս:

6.3 Սահմանային մարժայի մեծությունը սահմանվում է Բրոքերի կողմից որպես Ոչ բավարար ծածկույթով գործարքի գնի տոկոս, որը հասանելի և տեսանելի է Համակարգում:

6.4 Սահմանային մարժայի մեծությունը Հաճախորդի հաշվում չապահովելու դեպքում Համակարգի կողմից իրականացվում է Դիրք(եր)ի փակում: Ընդ որում եթե Համակարգում առկա են մեկից ավել բաց Դիրքեր, ապա Դիրքերի փակման հերթականությունն ընտրվում է ըստ դրանցից ամենախոշոր վնասով Դիրքի:

6.5 Նախնական և Սահմանային մարժայի մեծությունները կարող են փոխվել՝ առանց Հաճախորդին այդ մասին նախապես ծանուցելու, և Հաճախորդը սույնով հավաստում է, որ ինքը գիտակցում է դրանց՝ ժամանակի ցանկացած պահի հետևելու անհրաժեշտությունը, և որ ինքը չի կարող բողոք ներկայացնել, եթե նշված մեծությունների փոփոխման արդյունքում տեղի ունենա Դիրքերի փակում:

6.6 Բրոքերը չի ստանձնում Սահմանային մարժայի մեծությունը չբավարարելու վերաբերյալ Հաճախորդին ծանուցելու պարտականություն, և Համակարգն առանց ծանուցման կարող է իրականացնել համապատասխան Դիրքերի փակում՝ ստացված Միջոցները ուղղելով Սահմանային մարժայի մեծության բավարարմանը, ինչպես նաև Հաճախորդի դրամական և արժեթղթերով պարտավորությունների մարմանը:

6.7 Սույնով Կողմերը պայմանավորվում են, որ Սահմանային մարժայի մեծությունը հանդիսանում է Հաճախորդի դրամական կամ արժեթղթերով պարտավորությունը՝ արտահայտված դրամական համարժեքով:

6.8 Սույնով Կողմերը պայմանավորվում են, որ մինչև Հաճախորդի կողմից Հաճախորդի դրամական և արժեթղթերով պարտավորությունների լրիվ և ամբողջական մարումը Ոչ բավարար ծածկույթով գործարքի հետևանքով ստացված դրամական միջոցները և արժեթղթերը կամ վերջիններիս իրացման արդյունքում ստացված դրամական միջոցները, որպես Հաճախորդի պարտավորությունների ապահովման միջոց, կարող են պահվել Բրոքերի կողմից (Միջոցների պահում)՝ Հաճախորդի դրամական և արժեթղթերով բոլոր պարտավորությունների ընդհանուր գումարի սահմաններում: Միջոցների պահումը ենթադրում է, որ Բրոքերը իրավունք ունի սառեցնել համապատասխան գումարի միջոցներ Հաճախորդի հաշվին և չկատարել դրանց փոխանցման հանձնարարականները:

6.9 Եթե Հաճախորդը չի օգտվում Ոչ բավարար ծածկույթով գործարքներ կնքելու հնարավորությունից, ապա Օրական առևտրում միավոր արժեթղթի վերջնահաշվարկն իրականացվում է առնվազն երկու օր հետո:

6.10 Սույնով Հաճախորդն ընդունում և հասկանում է, որ Համակարգի միջոցով Ոչ բավարար ծածկույթով գործարքների կնքումը հնարավոր է բացառապես այն դեպքում, եթե Հաճախորդի՝ Համակարգով գործառնություններ կատարելու համար նախատեսված Բրոքերային դրամական հաշվում առկա է Նախնական մարժայի մեծությանը բավարարող գումար կամ Արժեթղթերի հաշվում առկա են այդ գումարին համարժեք արժեթղթեր՝ հաշվարկված տվյալ պահի Շուկայական գնով:

6.11. Սույնով Հաճախորդն ընդունում է և հաստատում է, որ տեղյակ է, որ միջազգային շուկաներում ծառայությունների մատուցումը կարգավորվում է նաև միջազգային իրավական նորմերով, մասնավորապես՝ Միացյալ Թագավորության Ֆինանսական շուկան կարգավորող մարմնի կողմից (Financial Conduct Authority) սահմանված իրավական կարգավորումներով:

6.12 Համակարգի միջոցով Ոչ բավարար ծածկույթով վաճառքի գործարքների կնքումը հնարավոր է բացառապես որոշակի Ֆինանսական գործիքներով, որոնց ցանկը հասանելի և տեսանելի է Համակարգում:

7. ՍԱԿԱԳՆԵՐ ԵՎ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐ

7.1. Համակարգի միջոցով գործարքներ կնքելու հանձնարարականներն ի կատարումն փոխանցելու, ինչպես նաև այդ հանձնարարականներն ի կատարումն վերափոխանցող և կատարող Գործակալներին նրանց կողմից մատուցվող ծառայությունների համար

Հաճախորդը Բրոքերին վճարում է միջնորդավճարներ, որոնք սահմանվում են Սակագների մասին կանոններով :

7.2. Համակարգի միջոցով ցանկացած գործարքի կնքում հնարավոր է բացառապես այն դեպքում, եթե Հաճախորդի հաշվին առկա են այդպիսի գործարքի կնքման արդյունքում առաջացող և Հաճախորդի՝ արդեն իսկ առկա դրամական և արժեթղթերով պարտավորությունները կատարելու համար բավարար Միջոցներ:

7.3. Հաճախորդը վճարում է արտարժույթի երկար կամ կարճ դիրքերի հաջորդ օր (օրացուցային) տեղափոխման համար միջնորդավճար (overnight commission), որի դրույքաչափը տեսանելի է Համակարգում: Ընդ որում յուրաքանչյուր ուրբաթ օր տեղափոխման միջնորդավճարը գանձվում է երեք օրվա համար (ուրբաթ, շաբաթ, կիրակի), իսկ ԱՀ-ի ոչ աշխատանքային օրերի դեպքում՝ նաև այդ օրերի համար:

7.4. Ծածկույթը դրամական միջոցների դեպքում ապահովվում է Համակարգի միջոցով չբավարարող դրամական միջոցների օգտագործման հնարավորություն տրամադրելու միջոցով, ընդ որում անկախ այն փաստից, որ Համակարգը շահագործվում է Բրոքերի կողմից՝ Բրոքերն անձամբ սեփական Միջոցներից Հաճախորդին փոխառություն չի տրամադրում, այլ դրա համար հասանելի է դարձնում Գործակալների Միջոցները՝ Համակարգի միջոցով:

7.5. Ծածկույթը Ֆինանսական գործիքների (Ոչ բավարար ծածկույթով վաճառքի գործարքների) դեպքում ապահովվում է որպես գործարքի առարկա Ֆինանսական գործիքների չբավարարող մասին Շուկայական գնով հավասար դրամական միջոցների օգտագործման հնարավորության տրամադրում՝ համապատասխան գնանշման արժույթով: Ընդ որում՝ անկախ այն փաստից, որ Համակարգը շահագործվում է Բրոքերի կողմից՝ Բրոքերն ինքը սեփական Միջոցներից Հաճախորդին փոխառություն չի տրամադրում, այլ դրա համար հասանելի է դարձնում Գործակալների Միջոցները՝ Համակարգի միջոցով:

7.6. Կանոնների հիման վրա մատուցվող ծառայությունների համար Հաճախորդը Բրոքերին վճարում է բրոքերային ծառայությունների մատուցման համար Բրոքերի կողմից սահմանված սակագների համաձայն, իսկ Բրոքերի սակագներով սահմանված չլինելու դեպքում՝ Գործակալի կողմից սահմանված սակագներին համապատասխան:

7.7. Ծածկույթի ապահովման դիմաց հատուցման դրույքը սահմանվում է Ծածկույթի գումարը հասանելի դարձրած Գործակալի սակագներին համապատասխան:

7.8. Ծածկույթի ապահովման դիմաց հատուցման սակագինը որոշվում է տվյալ գործարքի կնքման օրվանից մինչև Բրոքերային հաշվին Ծածկույթի վերադարձման օրը հաշվարկված օրացուցային օրերի հաշվարկով:

7.9. Բրոքերի նկատմամբ Հաճախորդի պարտավորությունները, այդ թվում՝ Հաճախորդի դրամական և արժեթղթերով պարտավորությունները, ծագում են Հաճախորդի կողմից Համակարգի շահագործման համապատասխան գործողություն կատարելու պահից (համապատասխան ընտրված գործառնության կատարում/կոճակի սեղմում), ընդ որում Գործարքի և Ծածկույթի տրամադրման դեպքում՝ համապատասխան Գործարքի և Ոչ բավարար ծածկույթով գործարքի փաստացի կնքման հետաձգված պայմանով: Որոշակի ԱՀ-ներում որոշակի Ֆինանսական գործիքների առքուվաճառքի հանձնարարականների առաքման փաստը ինքնին, առանց գործարքի փաստացի կնքման պայմանի, առաջացնում է Հաճախորդի պարտավորություն՝ համապատասխան հանձնարարականը փոխանցելու ընտրված գործառնությունները Հաճախորդի կողմից իրականացնելու/կոճակը սեղմելու պահից:

7.10. Հաճախորդը հասկանում է, որ ամեն դեպքում Ծածկույթի տրամադրումը կարող է մերժվել առանց որևէ պատճառաբանության, և որ Ծածկույթի տրամադրումը ամեն դեպքում Բրոքերի հայեցողությունն է՝ որպես Համակարգին հասանելիություն տրամադրողի:

8. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՏՈՒՑՈՒՄՆԵՐ

8.1. Հաճախորդը Համակարգին հասանելիություն է ստանում ՝ բացառապես ի շահ իրեն օրինական Միջոցների օգտագործմամբ Ֆինանսական գործիքներով առևտուր իրականացնելու համար:

8.2. Համակարգի նկատմամբ Հաճախորդը Կանոնների 8.1. կետով սահմանված իրավունքներից բացի ոչ մի իրավունք ձեռք չի բերում և պարտավորվում է հատուցել Բրոքերին Համակարգը Կանոնների 8.1. կետով սահմանվածից բացի այլ նպատակներով կամ միջոցներով օգտագործելու համար, այդ թվում՝ Համակարգին այլ անձանց հասանելիություն տրամադրելու, օրենքին հակասող նպատակներով կամ անօրինական ճանապարհով ստացված Միջոցների օգտագործմամբ Ֆինանսական գործիքներով առևտուր իրականացնելու համար:

8.3. Հաճախորդը պարտավորվում է հատուցել Բրոքերին պատճառված ցանկացած վնաս և կատարած ցանկացած ծախս, որը բխում է Բրոքերին ներկայացված՝ Հաճախորդի կողմից Համակարգի օգտագործման հետ կապված երրորդ անձանց պահանջներից, այդ թվում եթե այդպիսի պահանջները ներկայացվել են Բրոքերին (Բրոքերի հաշիվներից անակցեպտ բռնագանձվել է) Հաճախորդի Դիրքերի ավտոմատացված փակում իրականացնելու կամ այդպիսի փակումը այնպիսի ժամանակահատվածում իրակացնելու համար, երբ Հաճախորդի դրամային պարտավորությունը կամ Հաճախորդի պարտավորությունը արժեթղթերով գերզանցում են Նախնական մարժայի կամ Սահմանային մարժայի մեծությունները:

8.4. Կողմերի պատասխանատվության այն հարցերը, որոնք կարգավորված չեն Կանոններով կարգավորվում են Պայմանագրով և Պահառության պայմանագրով, իսկ դրանցով կարգավորված չլինելու դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ:

8.5. Բրոքերը պատասխանատվություն չի կրում Համակարգի կողմից Դիրքերի ավտոմատացված փակում իրականացնելու արդյունքում Հաճախորդի կրած վնասի համար:

8.6. Եթե Համակարգը Դիրք(եր)ի ավտոմատացված փակում չի կատարում, Հաճախորդը իր ողջ գույքով պատասխանատվություն է կրում դրա արդյունքում առաջացած իր պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

8.7. Բրոքերը որևէ պարտավորություն չի ստանձնում Հաճախորդի հաշիվների բացման, վարման, հաշվում միջոցների հաշվառման, պահառության, դրանց նկատմամաբ իրավունքների գրանցման, պատահական կորստի, հաշիվները վարող և սպասարկող անձանց սնանկության կամ պարտավորությունների չկատարման համար բռնագաձումների արդյունքում Հաճախորդի միջոցների կորստի և նվազման համար:

8.8. Կանոններով մատուցվող ծառայությունների որակի համար Բրոքերը երաշխիքներ չի տալիս և պարտավորություն չի ստանձնում ապահովել Համակարգի գործառնության շարունակականությունը և պատշաճությունը:

8.9. Յուրաքանչյուր պահի դրությամբ Հաճախորդը ընդունում է Համակարգի աշխատանքը «ինչպես որ է» սկզբունքով, այն է՝ Համակարգի ցանկացած հնարավոր խափանում և/կամ դանդաղում ցանկացած պատճառով (բացառությամբ Բրոքերի դիտավորյալ գործողությունների) ցանկացած պահի դրությամբ Հաճախորդն ընդունում է որպես

Համակարգին բնորոշ հատկություն: Բրոքերը պատասխանատվություն չի կրում այդպիսի խափանումների և/կամ դանդաղումների համար: Այնուամենայնիվ, Բրոքերը կգործադրի հնարավոր բոլոր ջանքերը/քայլերը նշված խափանումները և/կամ դրանց հետևանքները շտկելու գործում:

9. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

9.1. Կանոններն ուժի մեջ է մտնում բոլոր այն հաճախորդների համար, ովքեր տվել են Կանոններին միանալու իրենց համաձայնությունը, որի հիման վրա Ընկերությունը վերջիններիս հասանելիություն է տվել Համակարգին, և եթե Հաճախորդի և Բրոքերի կողմից ստորագրվել և ուժի մեջ են մտել են Պայմանագիրը և Պահառության պայմանագիրը:

9.2. Կանոնները գործում են այնքան ժամանակ, քանի դեռ Հաճախորդն ունի հասանելիություն Համակարգին:

9.3. Հաճախորդը ցանկացած պահի կարող է հրաժարվել Համակարգի միջոցով ծառայություններից, իսկ Բրոքերը՝ դրանց մատուցումից, ընդ որում Հաճախորդը պարտավոր է իր հրաժարվելու մասին հայտնել 5 աշխատանքային օր առաջ: Համակարգի միջոցով ծառայությունների մատուցումից Բրոքերի կողմից հրաժարվելու դեպքում Բրոքերը իրավունք ունի իրականացնել Հաճախորդի Դիրքերի փակում՝ առանց Հաճախորդի համաձայնության: Համակարգի միջոցով մատուցվող ծառայություններից Հաճախորդի հրաժարվելու դեպքում վերջինիս Միջոցների տնօրինման հարցը լուծվում է համաձայն Պայմանագրի: Ամեն դեպքում, սակայն, Հաճախորդի ձեռքբերած արժեթղթերը փոխանցվում են Բրոքերի անվամբ բացված անվանատիրոջ այլ հաշիվների և շարունակվում են հաշվառվել Բրոքերի մոտ՝ որպես ենթապահառու, եթե Հաճախորդի և Բրոքերի միջև ձեռք է բերվում նման համաձայնություն և եթե Բրոքերը հնարավորություն ունի իրականացնել այդ արժեթղթերի ենթապահառությունը:

9.4. Կանոնները կարող է միակողմանիորեն փոփոխվել բացառապես Բրոքերի կողմից՝ այդ մասին Հաճախորդին ծանուցելու կամ Կայքում համապատասխան փոփոխություն տեղադրելու միջոցով: Փոփոխությունը ուժի մեջ է մտնում Հաճախորդի կողմից ծանուցումը ստանալու կամ Կայքում համապատասխան գրառման տեղադրմանը հաջորդող 11-րդ օրը: Ծանուցումը պետք է պարունակի լրացման/փոփոխության տեքստը՝ ստորագրված Բրոքերի իրավասու անձի կողմից:

9.5. Հաճախորդը գիտակցում է, որ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի ապրիլի 8-ի ««Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց գործունեության նկատմամբ պահանջները» կանոնակարգ 4/07-ը հաստատելու մասին» թիվ 113-Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց գործունեության նկատմամբ պահանջները» կանոնակարգ 4/07-ի (այսուհետ՝ Կանոնակարգ) համաձայն սահմանվել է, որ լեվերիջով (Ոչ բավարար ծածկույթով) ոչ ստանդարտացված գործարքներ կարող են կնքել միայն պրոֆեսիոնալ հաճախորդները, և նույնիսկ այդ դեպքում՝ լեվերիջը (սույն պայմանագրի համաձայն՝ Համակարգի միջոցով Ոչ բավարար ծածկույթով գործարքների հնարավորության տրամադրման համար Հաճախորդի կոմից ներդրված և անհրաժեշտ սակայն չներդրված միջոցների հարաբերակցությունը) չպետք է գերազանցի 1/300 ռեզիդենտ Հաճախորդների դեպքում և 1/400 ոչ ռեզիդենտ Հաճախորդների դեպքում: Հաճախորդը գիտակցում է, որ Բրոքերը չի կատարում Հաճախորդի պատվերները, այլ միայն փոխանցում է դրանք ի կատարում՝ Համակարգին հասանելիություն տրամադրելու գործիքի միջոցով, ուստի նաև չի տրամադրում լեվերիջ (Ծածկույթ) Հաճախորդին, այլ Համակարգի միջոցով թույլ է տալիս օգտվել այլ անձանց, այդ

թվում Համակարգի օպերատորի կողմից տրամադրվող լեվերիջից՝ Ոչ բավարար ծածկույթով գործարք կնքելու հնարավորությունից: Հաճախորդը պարտավորվում է Ոչ բավարար ծածկույթով ոչ ստանդարտացված գործարքներից (այդ թվում՝ արտարժույթի փոխարկման՝ ֆորեքս գործարքներ կնքելիս) զերծ մնալ վերոնշյալ 1/300 և 1/400 հարաբերակցությաունը (հայտարարում) գերազանցող Ոչ բավարար ծածկույթով գործարքներ կնքելուց: Համաձայն Կանոնակարգի Մարժայի մեծությունը չի կարող պակաս լինել 5,000,000 ռեզիդենտի, իսկ 2,500,000 ոչ ռեզիդենտի համար: Բրոքերը իրավասու է Համակարգում արգելափակել ի խախտումն նշված պահանջների, որևէ գործարքի Կնքումը:

9.6. Այն աղբյուրները և փաստաթղթերը, որոնց Կանոններում հղում է արվում՝ որպես Կանոններով որոշվող պայման պարունակող, հանդիսանում են Կանոնների բաղկացուցիչ մասերը՝ պայմանով, որ օբյեկտիվորեն հնարավոր է հավաստիանալ ցանկացած պահի դրությամբ դրանց բովանդակության մեջ: Սույն կետում նշված փաստաթղթերի և աղբյուրների (ներառյալ Պայմանագիրը և Պահառության պայմանագիրը) և Կանոնների դրույթների միջև հակասության դեպքում գերակայում են Կանոնների դրույթները:

9.7. Կանոնների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը, իսկ Կանոններից բխող վեճերը ենթակա են լուծման ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: